ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » սեպտեմբերի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-244-31.07.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1122 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-244-31.07.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 9-րդ հոդվածի համաձայն՝

«Վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում (...) մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:»:

Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումներն իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան:

Նույն օրենսգրքի 22–րդ հոդվածի համաձայն՝

«Վարչական տույժը համարվում է պատասխանատվության միջոց և կիրառվում է, նպատակ ունենալով վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել խորհրդային օրենքները պահպանելու, սոցիալիստական համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը:»:

Օրենսգրքի մեկ այլ՝ 32-րդ հոդվածի համաձայն՝

«(...) Տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:»:

Վերոգրյալ իրավական կարգավորումների համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ վարչական տույժը պետական հարկադրանքի միջոց է, որը նշանակվում է զանցանք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից ու ազատություններից օրենքով նախատեսված զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Վարչական տույժը պետության վարչական քաղաքականության իրականացման հիմնական միջոցներից մեկն է և հանդիսանում է զանցանքին պետության պաշտոնական արձագանքը: Վարչական տույժի նպատակն է վարչական իրավախախտում կատարած

անձին դաստիարակել օրենքները հարգելու ոգով, կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը: Նշված նպատակներին հասնելու լուրջ երաշխիք է վարչական տույժ սահմանելիս և նշանակելիս արդարության և համաչափության սկզբունքների պահպանումը:

Վարչական տույժի արդարությունը դրսևորվում է զանցանքին վարչաիրավական միջոցներով արձագանքելու պարտադիրությամբ, ինչպես նաև զանցանքի և վարչաիրավական ներգործության միջոցների (տույժի) համաչափության ապահովմամբ: Տույժն արդարացի է, եթե համաչափ է կատարված զանցանքին, ինչպես նաև բավարար տույժի նպատակներին հասնելու տեսանկյունից:

Այս առումով, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև համաչափության սահմանադրական սկզբունքին: Այսպես, վարչական տուգանքը դրամական տուժանք է, որը՝ որպես վարչական իրավախախտման համար նշանակվող պատասխանատվության միջոց, կիրառվում է անձի մոտ իրավահպատակ վարքագիծ ձևավորելու և նոր վարչական իրավախախտումների կատարումը կանխելու նպատակներով: Ընդ որում, պատասխանատվության միջոց սահմանելիս օրենսդրի հայեցողական լիազորությունները սահմանափակված են Սահմանադրության 71-րդ հոդվածի 2-րդ մասով, համաձայն որի՝ օրենքով սահմանված պատիժը, ինչպես նաև նշանակված պատժատեսակն ու պատժաչափը պետք է համաչափ լինեն կատարված արարքին: Այդ սկզբունքի պահանջներով՝ վարչական իրավախախտումների համար նախատեսված տուգանքների չափերը պատահական չեն ու կոչված են ծառայելու վարչական տույժի նպատակների իրականացմանը: Այլ կերպ ասած, կոնկրետ արարքի համար վարչական տուգանքի չափը սահմանելիս հաշվի են առնվում այդ արարքի հանրային վտանգավորության աստիճանը, իրավախախտողին դաստիարակելու և այլ անձանց կողմից ևս հետագայում իրավախախտումների կատարումը կանխելու անհրաժեշտությունը: Ընդ որում, քիչ չեն դեպքերը, երբ իրավական նորմի գործնական իրացման արդյունքում ի հայտ եկած խնդիրներից ելնելով (վարչական տուգանքը չի ծառայում իր նպատակին)՝ տուգանքի չափերը օրենսդրի կողմից վերանայվում և փոփոխվում են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-920 որոշման մեջ, անդրադառնալով համաչափության սկզբունքի բովանդակությանը, նշել է, որ. «*(…) համաչափության սկզբունքը պահանջում է ապահովել արդարացի հավասարակշռություն՝ սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև*»:

Այսպիսով, տուգանքի չափ նախատեսելիս օրենսդրի հայեցողական լիազորությունները բացարձակ չեն, ինչից ենթադրվում է, որ օրենքով նախատեսված տուգանքի չափը ուղիղ համեմատական է արարքի հանրային վտանգավորության աստիճանին:

Տվյալ դեպքում ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար սանկցիայի չափ սահմանելիս օրենսդիրը հատուկ ուշադրություն պետք է դարձնի ճանապարհային երթևեկության կանոնների խախտման բնույթին:

Վերոնշյալ վերլուծությունների լույսի ներքո դիտարկելով նախագծով առաջարկվող իրավակարգավորումները՝ գտնում ենք, որ խնդրո առարկա զանցանքների համար նախագծով նախատեսված չափերով տուգանքների սահմանումը չի բխում օրենսգրքի 10-րդ գլխի ընդհանուր տրամաբանությունից, ինչպես նաև խնդրահարույց է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված համաչափության սկզբունքի տեսանկյունից:

Միաժամանակ հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության կողմից մշակված և արդեն իսկ ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ տուգանային միավորների համակարգի ներդրմանն ուղղված օրինագծերի փաթեթով որդեգրված է սկզբունքորեն նոր մոտեցում: Մասնավորապես, նախատեսվում է ճանապարհային երթևեկության բնագավառի իրավախախտումների համար, տուգանքից բացի, որպես վարչական տույժ սահմանել նաև տուգանային միավորը, որոնց կիրառման արդյունքում օրինախախտ վարորդները կարող են ընդհուպ զրկվել տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մինչև 1 տարի ժամկետով: Բացի այդ, նախագծերով վերանայվել է նաև նշված ոլորտի տուգանային քաղաքականությունը:

Մասնավորապես, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 26-րդ մասով նախատեսված իրավախախտման համար հիշյալ օրինագծով նախատեսվել է տուգանային միավորի կիրառում: Ինչ վերաբերում է ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու համար նախատեսված պատասխանատվությանը, ապա օրինագծով ամբողջովին վերանայվել են տույժերի տեսակները, մասնավորապես՝ օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման համար նախատեսվում է տուգանք 29 հազարի չափով, սակայն սահմանվում է լրացուցիչ տույժ 4 տուգանային միավորի ձևով: Նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավախախտման համար սահմանված տուգանքը փոխարինվում է վարելու իրավունքից զրկմամբ՝ 1 տարի ժամկետով: Տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում է նախատեսվում նաև նշված հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված իրավախախտումների կատարման դեպքում՝ 2 տարի ժամկետով: Միաժամանակ, 126-րդ

հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցի կամ թեթև մարդատար-տաքսի ավտոմոբիլի վարորդների կողմից կատարելու համար սահմանվելու է առավել խիստ պատասխանատվություն՝ 6 ամիս ժամկետով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկում:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծով ներկայացված առաջարկությունը հայեցակարգային բնույթ ունի, և պետության կողմից մոտեցման ընտրությունը պետք է կրի համակարգային բնույթ, ուստի խնդրին ավելի համակարգային լուծում տալու նպատակով առաջարկում ենք օրենքի նախագծով քննարկվող հոդվածը թողնել անփոփոխ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. Ա. Ա Ղ Ա Ջ Ա Ն Յ Ա Ն

14 օգոստոսի 2019 թվականի N 1122 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-244-31.07.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. օգոստոսի 14
Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-244-31.07.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 124-րդ հոդվածի 26-րդ մասի «տասնհինգապատիկի» բառերը փոխարինել «երեսնապատիկի» բառերով:

«26. Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով»:

Հոդված 2. Հայաստանի Հանրապետության 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 1-ին մասի «հարյուրհինսնապատիկի» բառերը փոխարինել «երկուհարյուրհինսնապատիկի» բառերով:

«1. Տրանսպորտային միջոցները ոչ սթափ վիճակում վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, եւ զանցանքը չի պարունակում սույն հոդվածի երկրորդից վեցերորդ մասերի հատկանիշները՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրհինսնապատիկի չափով»:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության 1985թ. դեկտեմբերի 6-ին ընդունված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 126-րդ հոդվածի 2-րդ մասի «երկուհարյուրապատիկի» բառերը փոխարինել «երեքհարյուրապատիկի» բառերով:

«2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը կատարելը, եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը կամ եթե նրա մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Տարեցտարի Ճանապարհատրասնպորտային պատահարների թիվը աճում է, եւ վիճակագրության համաձայն յուրաքանչյուր տարի ավելանում է նաեւ դրանց հետեւանքով զոհված եւ վիրավորված մարդկանց թիվը:

Պրակտիկայում, ինչպես նաեւ օրենսդրությամբ ճանապարհատրանսպորտային պատահարները դիտարկվում են որպես անզգուշությամբ կատարված հանցագործություններ: Սակայն տրանսպորտային միջոցը վարորդի կողմից ալկոհոլի, թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ազդեցությամբ վարելը կատարվում է ուղղակի դիտավորությամբ եւ ավտովթարի արդյունքում ծանր հետեւանքների առաջացումը նշված պայմաններում դիտարկվում է որպես ծանրացուցիչ հանգամանք:

Գործող օրենսդրության պայմաններում տրանսպորտային միջոցները ոչ սթափ վարելը, եթե վարորդը միայն ալկոհոլի ազդեցության տակ է, եւ զանցանքը չի պարունակում համապատասխան հոդվածի երկրորդից վեցերորդ մասերի հատկանիշները, առաջացնում է տուգանք 150.000 ՀՀ դրամի չափով, իսկ նշված արարքը կատարելիս եթե վարորդի արյան մեկ լիտրի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 1 գրամը, կամ եթե մեկ լիտր արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակությունը գերազանցում է 0.5 միլիգրամը, առաջացնում է տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ բազմաթիվ կոպիտ խախտումների հիմնական պատճառ է հանդիսանում վարորդների կողմից օգտագործումը: Կարծում ենք, որ տուգանքների չափերի բարձրացումը եւ պատասխանատվության խստացումը կնվազեցնի կոպիտ խախտումների թիվը, եւ սրանով է պայմանավորված տուգանքի չափերը համապատասխանաբար 250.000 եւ 300.000 ՀՀ դրամ սահմանելու առաջարկի ներկայացումը:

Եթե «Հոծ գիծ»-ը տրորելը կարող է պայմանավորված լինել տվյալ պահին ճանապարհատրանսպորտային ստեղծված իրավիճակով, այն կարող է լինել անզգուշության հետեւանք կամ իրավիճակից բխող հարկադրական մանեւր, ապա տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելը վարորդների կողմից կատարվում է ուղղակի դիտավորությամբ: Բացի այդ սա տրանսպորտային միջոցի վարորդի կողմից անհարգալից վերաբերմունք է հասարակության նկատմամբ:

Նման պայմաններում հետիոտնը ստիպված ոչ սահմանված վայրով կարող է դուրս գալ երթեւեկելի ուղեմաս՝ վթարային իրավիճակ ստեղծելով երթեւեկության մյուս մասնակիցների համար:

Գործող օրենսդրությամբ տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելու համար սահմանված է 15.000 ՀՀ դրամի չափով տուգանք: Փորձը ցույց է տալիս, որ ներկայիս տուգանքի չափը բավարար չէ եւ չի նպաստում նման խախտումների թվի նվազեցմանը, ուստի կարիք կա տուգանքի շեմը բարձրացնել՝ սահմանելով 30.000 ՀՀ դրամ:

Իրավական ակտի ընդունման դեպքում ակնկալվող արդյունքը

Ակնհայտ է, որ այս փոփոխությամբ ոլորտի բոլոր խնդիրները լուծում չեն ստանում, սակայն ակնկալվում է, որ ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու եւ տրանսպորտային միջոցը հետիոտնային անցման վրա կանգնեցնելու համար վարչական պատասխանատվության զգալի խստացումը կնպաստի այդ իրավախախտումների թվի նվազմանը: